

Մ Ո Վ Ս Է Ս Գ . Կ Ը Թ Ո Ղ Ի Կ Ո Ս

1. Մ ՈՒՏՔ

1933 Մայիս 21ին կը բոլորուէր Մովսէս կաթողիկոսի մահուան 300ամեայ տարեգարձը :

Չուզեցի որ սահէր այս բարեգէպ օրը, առանց վերջիչեցնելու նոր սերունդին այս մեծ, դարակազմիկ անձնաւորութեան հողւոյ ազնուութիւնը, նկարագրի ամբուլթիւնը, սրբասնունդ կեանքը եւ ազգօգուտ գործունէութիւնը :

Ժամանակակիցները կոչած են զինքը «Երկրորդ Լուսաւորիչ Հայոց» . իսկ Սիմէոն կաթողիկոս Երեւանցի կը ներկայացնէր անոր նկարագիրը այսպէս . «Սա էր այր հոգերնկալ, առաքինազարդ եւ բնակարան շնորհաց Հոգւոյն սրբոյ, սիրեցեալ յԱստուծոյ եւ ի մարդկանէ, որ ի նստին յԱթոռս սուրբ, որպէս թէ նոր ի նորոյ ի հիմանէ նորոգեաց զսուրբ Աթոռս եւ պայծառացոյց հոգեւորական կարգօք եւ մարմնական պիտոյիւք : Որ գրեթէ զկնի Լուսաւորչին մերոյ եւ թոռանց նորին եւ թարգմանչացն մերոց, յայլոց Հայրապետացն ոչ ոք եղեւ երախտաւոր եւ բա-